ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Հոլիդեյ Դիզայն ՍՊԸ-ն ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/75 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
8	Բացվող բազմոց՝ արտաքին չափսերը (Երկարություն x Բարձրություն x Խորություն) չպետք է գերազանցեն 200 x 95 x 105 սմ ։ Բազմոցը պետք է ունենա «Եվրոգիրք» տիպի բացման մեխանիզմ, որը հեշտ և հուսալի կիրառմամբ բացվում է առաջ քաշվելու և թիկնակի իջեցման միջոցով՝ ձևավորելով լիարժեք երկտեղանի մահճակալ։ Բացված վիճակում քնելու մակերեսը պետք է լինի առնվազն 190 x 150 սմ՝ ապահովելով հարմարավետ և ընդարձակ հանգստի պայմաններ երկու անձի համար։ Արտադրանքը պարտադիր պետք է ունենա ներքևի հատվածում տեղակայված ընդարձակ և դիմացկուն հագուստի պահոց, որը նախատեսված է անկողնային պարագաների կամ այլ իրերի պահպանման համար՝ ապահովելով լրացուցիչ պահեստային տարածք և բարձր գործնականություն։ Կտորի տեսակը նախընտրելի է բարձրորակ վելյուրային նյութ ։ Գույնը համաձայնեցնել պատվիրատուի հետ։ Բազմոցը պետք է համալրված լինի գունային և ոճային համադրությամբ համապատասխանող երկու դեկորատիվ բարձով։ Բազմոցի ապրանքանիշը Էլեգիա կամ Ստոլլայն կամ Մեբելգրադ կամ Իմպերալ։ Ապրանքը շահառուի հասցե է մատակարարվելու քանդված վիճակում՝ ամբողջությամբ կցամասերով, գործարանային ստվարաթղթե և պաշտպանիչ փաթեթավորման մեջ, որտեղ յուրաքանչյուր տարր լրացուցիչ ապահովված կլինի հաստ թղթով կամ փրփրապատ շերտերով՝ տեղափոխման ընթացքում հնարավոր վնասներից պաշտպանելու համար։ Հավաքումն իրականացվելու է շահառուի բնակարանում՝ մատակարարի միջոցներով։ Մատակարարի կողմից պետք է տրամադրվի առնվազն 6 ամիս երաշխիք, իսկ մատակարարման պահին մատակարարից կամ արտադրողից պահանջվում է ներկայացնել ապրանքի համապատասխանության հավաստագրեր և սերտիֆիկատներ, որոնք

	հաստատում են դրա համապատասխանությունը գործող տեխնիկական նորմերին և ստանդարտներին: Մատակարարումը կատարել անհրաժեշտ քանակներով՝ պատվիրատուի նախնական պահանջի (հայտի) հիման վրա՝ այն ներկայացվելուց հետո 3-օրյա ժամկետում: Նախնական հայտը ներկայացվում է էլեկտրոնային փոստի միջոցով:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Հոլիդեյ Դիզայն ՍՊԸ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/75 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
8	